# ԵՐԱԶԳԱՎՈՐՍԻ 1977 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Երազգավորս գյուղը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին՝ պատմական Երազգավորս բերդ-ավանից մոտ 2 կմ հյուսիս (այժմ՝ Թուրքիայի տարածքում): Վերջինս դեռևս IX դ. 80-ականներին դարձավ Բագրատունիների արքայական նստավայրը: Բագրատունի առաջին թագավորները Երազգավորսում կառուցել են պալատներ, եկեղեցիներ, պաշտպանական կառույցներ: Դրանցից Սմբատ թագավորի կառուցած կաթողիկեն լավ պահպանվել էր մինչև նախորդ դարի կեսերը (50-ականներին պայթեցվել է):*

*Երազգավորս գյուղում (նախկին Արալըղ) 1977 թ. պեղումներով հայտնաբերվել են* VII *դարին պատկանող խաչաձև հատակագծով եկեղեցու ավերակներ, բնակարանային, արտադրական և այլ շինություններ: Եկեղեցին յուրօրինակ էր իր հյուսիս-արևելքում կառուցված երկարավուն ու նեղ ավանդատնով: Մանրազնին ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այն կառուցվել է եկեղեցու հետ միաժամանակ: Ի դեպ, նմանօրինակ հուշարձան ուսումնասիրվել է Շիրակի մարզի Մայիսյան գյուղում (Օրթաքիլիսա), գրեթե նույն տարածքում՝ հուշարձանից 10 կմ հյուսիս, որից կարելի է եզրակացնել, որ նման կառույցները հատկանշական են Շիրակի համար: Եկեղեցու քիվը զարդարված է եղել շքեղ քանդակով:*

*Հայտնաբերվեցին նաև արաբական արշավանքների ընթացքում կատարված դաժանությունների ապացույցներ՝ մի քանի թոնիրներ, որտեղ վառել են տեղաբնիկներին: Բացվեցին համաժամանակյա ճարտարապետական կոթողի մանրամասներ՝ եռաստիճան հենապատերով պատվանդան, քարե դագաղներ և այլն:*

*Պեղումների կարևոր արդյունքներից է X դ. բազմահարկ ամրոցի ավերակների հայտնաբերումը: Պարզվում է, որ Անին մայրաքաղաք դառնալուց հետո շրջապատվում է ամրոցների խիտ ցանցով, որոնց հեռավորությունը մեկը մյուսից Երազգավորսի հատվածում 3.5 կմ է: Երազգավորսը Տիգնիսի*[1]*, Ախուրիկի և այլ բերդերի հետ Անի մայրաքաղաքի մատույցները պաշտպանել է հյուսիսից: Ամրոցը վերջնականապես կործանվել է XIII դ.: Սակայն կյանքն այստեղ շարունակվել է նաև հետագա դարերում: Այդ են վկայում հայտնաբերված ձիթհանը, արտադրական այլ կառույցներն ու կենցաղային առարկաները:*

---

[1] *Թորոս Թորամանյանը, խոսելով Շիրակավան մայրաքաղաքի ու դրանից ընդամենը 2.5 կմ հեռավորության վրա գտնվող Տիգնիս բերդի մասին, գտնում է, որ այն պետք է ունենար ապարանք, որը տեղադրված է եղել նշված բնակավայրի բարձրադիր մասում, հավանաբար, Երազգավորս մայրաքաղաքի պաշտպանության համար (տե՛ս Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 312–314, 1948, էջ 114–119):*

*Պարզվում է, որ Անի մայրաքաղաքն ունեցել է պաշտպանական մի քանի օղակներ, որոնցից մեր կողմից ուսումնասիրվել են առայժմ երկուսը՝ Անիի միջին և մոտակա պաշտպանական համակարգերը[2]:*

*Հետաքրքիր է այն փաստը, որ դեռ վաղ միջնադարում նույնպես հարկ էին համարում երկիրը պատել հուսալի բերդերով: Հայտնի է Մուշեղ Մամիկոնյանի ծրագիրը՝ Հայաստանը ռազմական ճամբարի վերածելու, երկիրը բերդերի ու ամրոցների խիտ ցանցով պատելու մասին: Պատմական դեպքերի բերումով այդ գաղափարն իրագործվեց Բագրատունիների տիրապետության օրոք:*

*Ինչ վերաբերում է պեղումների ժամանակ բացված Արալբդ - Երազգավորսին, ապա այն իր ուրույն տեղն ունի VII դ. ճարտարապետական կառույցների շարքում: Հայտնի է, որ Շիրակավանից առաջ, կարճ ժամանակով, Բագարանը դարձավ մայրաքաղաք: Հարցն այն է, որ մեր պեղած Երազգավորս - Արալբդից մոտ 3 կմ հեռավորության վրա դեպի արևմուտք գտնվում է Տիգնիս բերդը: Մոտավորապես նույն հեռավորության վրա, սակայն հարավ-արևմտյան կողմում՝ Շիրակավան - Երազգավորս մայրաքաղաքն է, մի քանի կիլոմետր հյուսիս՝ Կալա-իչի բարձունքի բարձրադիր մասում՝ Հռոմի պաշտպանական համակարգն է: Բնակավայրերի և բերդերի այսպիսի տեղադրման մասին տարբեր կարծիքներ են հայտնվել: Մի բան հաստատ էր, որ յուրաքանչյուր նման բերդ կամ ամրոց, ինչպես իր ժամանակին, այնպես էլ հետագա դարերում մի քանի նպատակի է ծառայել.*

*1. յուրաքանչյուր ամրոց պաշտպանական ինքնաբավ միավոր է,*

*2. կատարել է առաջապահ ամրոցի դեր՝ մտնելով մոտակա ամրոցների պաշտպանական համակարգի մեջ,*

*3. ժամանակի առաջադրած խնդիրներին համապատասխան (տվյալ դեպքում Շիրակավանի, հետագայում նաև Անի մայրաքաղաքի համար)՝ տարբեր նշանակություն է ունեցել: Անին մայրաքաղաք դառնալուց հետո վերոհիշյալ մայրաքաղաքը մի կողմից դարձել է Մարմաշենի պաշտպանական համակարգի, մյուս կողմից Անիի առաջապահ ամրոց: Պետք է նշել, որ Հայկական լեռնաշխարհում տարբեր ժամանակներում առաջացած պետական միավորներից շատերը նման պաշտպանական, տնտեսական և այլ նպատակների են ծառայել:*

*Երազգավորսում պեղումների միջոցով բացված եկեղեցին ունի կենտրոնական կամ գլխավոր խորան, որի բեմը հավասար է եկեղեցու մնացած տարածքի հարթությանը: Ինչպես դրսից, այնպես էլ ներսից ունի խաչաձև հատակագիծ: Հյուսիսարևելյան կողմում կա նաև ավանդատուն (հավանաբար, այս ժամանակներից է սկսվում լրացուցիչ սենյակի կառուցումը հոգևորականների հանդերձավորման և այլ պահանջների բավարարման համար): Պեղումներով հայտնաբերվել են դամբարաններ, որոնք առկա են ինչպես եկեղեցու ներսում, այնպես էլ անմիջապես սրան կից:*

Դիակիզված դամբարան: *Գտնվում է VII դ. եկեղեցու երկու (գլխավոր և հյուսիսարևելյան) խորանների միջև, ուղղվածությունը հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք: Մակարդակը գրեթե հավասար է գլխավոր խորանին:*

---

[2] *Ս. Հարությունյան. Անբերդ, Երևան, 1978, էջ 34–50:*

*Մյուս դամբարանը զուտ քրիստոնեական թաղում է, սալարկղ՝ փորված սև փափուկ տուֆի մեջ՝ մոտ 1 մ խորությամբ, վրան նույն քարից կափարիչով ծածկված:*

*Տիգնիս կամ Տգնիս բերդի մասին Ալիշանը բերում է Հ. Ներսես Սարգսյանի նկարագրությունը.* «...ի հարաւոյ արևելից գեղջն կայ բերդ այդ, ի 15352 բարձու լեռնակի, աւանդի մեհենատեղի լինել ի հնումն: Յամին 1807 Կոտովիչ զորավար ռուսաց առ տիգնիսաւ եհար զբանակ Յուսուֆ փաշայի Կարնոյ մինչև հասեալ էր նմա օգնութիւն Ապպաս Միրզա արքայորդին Պարսից....

Խոնարհագոյն ևս յԵ. Հր Տիգնիսայ մերձ յանկիւն կցուածոյ երկոցուն գետոցն՝ Շիրակայ և Արփայի կա գիւղն ԱՐԱԼԸՂ/ թերևս ի պատճառս միջանկեալ դրիցն կոչեցեալ այսպէս. զօրմէ ասէ վերոհիշեալ հայրս «ի գիւղս այս ամրոց մի կայ քառակուսի, կողմանցն միայն կանգուն գոլով ցարդ, այլ ի ներքս չիք ինչ և է ի դաշտավայրի: Ի խանգարեալ արձանագրին ուրիշ վերածնի անունս ՀԱԶԱՐԱԲԵԿ, և թուական զայս ձև օրինակի

Ի ՇԺԵ Թ: Առընթեր դրան կայ վէմ մի մեծ և ի վերայ թուական ՈՀԷ... առաջին թուականն ընթեռնելի է ըստ իս ի ՇԺԵ թվ., որ է 1066 ամ ՓՐԿՉԻՆ, թէ չիցե ՉԺԷ 1266, զի նույն ամ /1269/ յիշատակի յարձանագրութիւնս Հոռոմոսի վանաց Հազարաբէկ ոմն որդի Թայիկի»:

*Տարածական առումով մեր պեղումները նույնքան հեռավորության վրա են Երազգավորս մայրաքաղաքից, որքան արևմտյան կողմում գտնվող Տիգնիս բերդը: Նշենք, որ բերդի հյուսիսային կողմում՝ հարթ տարածության վրա, գտնվում է Թիքնիս կամ Տիկնիս գյուղը: Արտաքին պարիսպները, ինչպես նաև հատակագիծը, խիստ նմանություն ունեն Անբերդի միջնաբերդ դղյակին, որի պարիսպն այս տեսքով վերաբերում է Զաքարյանների ժամանակին: Տիգնիս ամրոցը, ինչպես և Անի մայրաքաղաքը Բագրատունիների հզոր թագավորության կործանումից հետո՝ Զաքարյանների ժամանակ, վեր են ածվել գյուղաքաղաքների, այդ երևույթը համընդհանուր էր դարձել Բագրատունյաց թագավորության վերանալուց հետո: Այնպիսի խոշոր բնակավայրեր, ինչպիսիք Արտաշատն ու Արմավիրն էին, նույնպես վերածվեցին գյուղաքաղաքների: Բացառություն չի կազմել Երազգավորս բնակավայրը: Խոսքն այն մասին է, որ տարածքները մեծանում էին: Շատ դեպքերում երկու բնակավայր, որոնք Բագրատունիների օրոք մայրաքաղաք են եղել, Զաքարյանների օրոք՝ X–XIII դդ., վեր են ածվել մեկ ընդհանուր բնակավայրի, և որոնց պատմական աղբյուրների մեծ մասում գյուղաքաղաք կամ քաղաքագյուղ են անվանում:*

Ձիթհան*: Պեղումների ժամանակ բացվել են ձիթհան, ձիթհանի քարը, ինչպես և բովելու տեղը: Մեր բացած ձիթհանը Զաքարյանների շրջանին է պատկանում: Անբերդի 1026 թվակիր արձանագրության մեջ հիշատակվում է կտավատի մասին, ինչը փաստում է, որ Բագրատունյաց ժամանակներում Արագածոտնի, ինչպես և Շիրակի շրջաններում լայնորեն տարածված էր կտավատի մշակումը: Մեզ հայտնի չէ, թե X–XI դդ., երբ Երազգավորսի կաթողիկե եկեղեցին դարձավ ամրոց և մտավ Բագրատունյաց թագավորության պաշտպանական համակարգի մեջ, մեր պեղած*

*բնակավայրն ինչպե՞ս էր կոչվում և, մանավանդ, կառուցողական ինչպիսի՞ սկզբունքներ ուներ:*

*Երազգավորսից ընդամենը մի քանի կիլոմետր հարավ՝ Լուսաղբյուր գյուղում, մինչ վերջերս պահպանվել էր XVIII–XIX դդ. կառուցված ձիթհանի շենքը: Նշելի է նաև, որ Շիրակի դաշտի գյուղերում անցյալ դարի վերջերին գրեթե ամեն տեղ կային ձիթհաններ: Դրանք մեծ մասամբ բնակավայրից դուրս էին գտնվում: Նախորդ հասարակարգի, տնտեսակարգի պայմաններում, պարտադրված այս կամ այն գյուղատնտեսական կուլտուրայի մշակման արդյունքում, կտավատի արտադրությունը թեև նվազեցվել, բայց լրիվ չի ընդհատվել: Ծովի մակերևույթից 1600–1700 մ բարձրության վրա գտնվող բնակավայրում շարունակել են կտավատ մշակել: Զիթատու այլ բույսերի մշակման (քունջութ և այլն) մասին մեզ ոչինչ հայտնի չէ:*

*Նշենք նաև, որ Կափուլի-Գուսանագյուղ բնակավայրի տարածքում մեր ուսումնասիրությունների ժամանակ հարավային Շահ-թաղթ կոչված վայրում ամբողջական քարերի կամ ավելի ճիշտ տուֆ քարերի մեջ պեղեցինք հորեր, որոնք ունեին միջնադարյան կարասների տեսք: Չենք բացառում, որ դրանք վերաբերում են նախնադարին: Հասկանալի է, որ յուրաքանչյուր անոթ, մեծ մասամբ անկախ ժամանակից, պետք է պատրաստվի այնպես, որ ծառայի նպատակին: Այլ խնդիր է, որ ժամանակի մտածելակերպի ու ճաշակի արդյունք է այս կամ այն ձևը՝ արտահայտված ուռուցիկ կամ ավելի շեշտված փոր ունեցող կարասների տեսքով: Մեր պեղածների պարագայում դրանք մի քանի հարյուր լիտր տարողություն ունեցող փորվածքներ էին, որոնց մեջ չհայտնաբերվեց որևէ հատիկ ցորեն կամ գարի: Նախապես կարծում էինք, թե գործ ունենք «...Թե ձեր Շարայի որկորք... մեր ամբարք չեն» արտահայտության հետ կապված շտեմարանների հետ: Դեռևս Գուսանագյուղի Շահ-թաղթ կոչվող վայրի ուսումնասիրություններն այն մակարդակի չեն, որ կարասներ կոչվածները կարողանանք վերագրել այս կամ այն ժամանակին: Գուսանագյուղի կենտրոնում է գտնվում X դ. կառուցված ամրոցը, որը XII–XIII դդ. նույնպես գյուղաքաղաք է եղել:*

*Երազգավորս - Արալբղ պեղումների, Երազգավորս - Շիրակավան մայրաքաղաքի, Տիգնիս ամրոցի տեղագրական ուսումնասիրության արդյունքում ստացվում է պաշտամունքային, պաշտպանական, տնտեսական համակարգերի մասին հստակ պատկեր: Պեղումների արդյունքները արաբական արշավանքների, դրանց ծանր հետևանքների, Բագրատունյաց թագավորների ամրոցաշինական գործողությունների, ամբողջ հայ ժողովրդի համառ պայքարի վառ արտահայտությունն են:*